ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«06» հոկտեմբերի 2025թ. N 3054-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ և ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 835-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 16-րդ, 17-րդ, 18-րդ կետերը և վարչապետի 2019 թվականի հունիսի 01-ի N 659-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին (այսուհետ՝ Նախարար) կից հասարակական խորհրդի նիստերի միջակայքում խորհրդի անդամների և նախարարության միջև աշխատանքների արդյունավետ կազմակերպման և հետադարձ կապի ապահովման համար.

1) Նախարարին կից հասարակական խորհրդի համակարգող պաշտոնատար անձ նշանակել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի օգնական Լիանա Սուրիկի Հովհաննիսյանին:

2) Նախարարին կից հասարակական խորհրդի պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի օգնական Անի Սամվելի Խաչատրյանին:

2. Համակարգող պաշտոնատար անձին՝

1) ապահովել խորհրդի անդամների հետ ամենօրյա անմիջական աշխատանքային կապ.

2) յուրաքանչյուր տարի մինչև հունվարի 20-ը մշակել և նախարարին է ներկայացնել խորհրդի հիմնական նիստերի տարեկան ժամանակացույցը և սահմանված ժամկետներում ապահովել դրա հրապարակումը.

3) սույն աշխատակարգի 2-րդ կետից բխող խնդիրների վերաբերյալ ստանում է (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) առաջարկություններ, դիտողություններ, այլ փաստաթղթեր խորհրդի անդամներից և ապահովում է դրանց՝ սույն աշխատակարգով սահմանված կարգով հետագա ընթացքավորումը.

4) անհրաժեշտության դեպքում խորհրդի անդամների և նախարարության պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպել քննարկումներ և քննարկման արդյունքները ներկայացնել նախարարին և (կամ) խորհրդին.

5) խորհրդի անդամներին էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացնել իրենց ներկայացրած առաջարկությունների, դիտողությունների, այլ փաստաթղթերի (այդ թվում՝ խորհրդի նիստում ներկայացված) ընթացքի և նախարարության դիրքորոշումների վերաբերյալ.

6) նախապատրաստել և համակարգել խորհրդի նիստերի կազմակերպման և օրակարգի ձևավորման աշխատանքները, նիստի օրակարգում ընդգրկելու համար խորհրդի անդամների առաջարկությունները ներկայացնել Նախարարին:

3. Պատասխանատու պաշտոնատար անձին՝ իրականացնել խորհրդի նիստերի կազմակերպական աշխատանքներն: Մինչև խորհրդի մյուս նիստը, հավաքել և ամփոփել նախորդ նիստի հարցերի ընթացքի, նախարարության կողմից կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը և ներկայացնել համակարգող պաշտոնատար անձին:

10/28/2025

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

ք.Երևան